Հաստատում եմ
Դպրոցի տնօրեն՝ Օ.Մանասյան

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԵՂՆԻԿԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ
<<31>> օգոստոսի 2023թ

# <<ԵՂՆԻԿԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>>-ՊՈԱԿ-Ի
# ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ
# ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՊԼԱՆ
# 2023-2024 ՈՒՍ ՏԱՐԻ

2023թ.

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքները կազմակերպել ՀՀ օրենսդրությամբ, <<Կրթության մասին>> ՀՀ օրենքով, <<Հանրակրթության մասին >>ՀՀ օրենքով ,ուսումնական հաստատության պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով:

Ուսումնական գործընթացն իրականացնելու համար մշակել և հաստատել հաստատության <<2023-2024 ուստարվա ուսումնական պլանը>> պահպանելով ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված <<Պետական հանրակրթական միջնակարգ դպրոցի 2023-2024 ուստարվա օրինակելի ուսումնական պլանի >> պետական պարտադիր ժամաքանակը և պարզաբանումների հավելվածը:

Պետության զարգացման ու հզորացման գործում պետք է կարևորել կրթության դերը հանրության կյանքում, ուստի պետք է ամեն ջանք ու եռանդ ներդնել բանիմաց, ուսյալ, արժանապատիվ, հայրենասեր, աշխատասեր քաղաքացիներ կրթել ու դաստիարակել: Մեր նպատակին հասնելու համար պետք է ժամանակաշրջանի պահանջներին համահունչ առաջադրել նորանոր խնդիրներ և փորձել հասնել դրանց լուծմանը: Հետևողական աշխատանքների, քննարկումների միջոցով փորձել հասկանալ ստացված արդյունքների դրական ու բացասական կողմերը, նորագույն ու փորձված մեթոդներ կիրառելով որակական նոր մակարդակի վրա բարձրացնել բոլոր առարկաների դասավանդումը դպրոցում:

Բարձրացնել յուրաքանչյուր դասի արդյունավետությունը՝ լայնորեն օգտագործելով համագործակցային ուսուցման, նոր մեթոդների և մանկավարժական նորագույն տեխնոլոգիաների ընձեռած հնարավորությունները:

Ապահովել ուսումնական ծրագրերի պահանջների կատարումը՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից մշակված առարկայական չափորոշիչների պահանջներին համապատասխան:

Հատուկ ուշադրություն դարձնել ուսուցիչ – աշակերտ հարաբերությունների նոր՝ ինտերակտիվ մեթոդների կիրառմանը, աշակերտակենտրոն դասապրոցեսի կազմակերպմանը:

Շարունակել աշխատանքը ուսուցիչների մանկավարժական-մասնագիտական մակարդակի բարձրացման ուղղությամբ:

ՈՒսուցման պրոցեսն ավելի արդյունավետ ,դասապրոցեսը հետաքրքիր, ուսուցումը բոլորի համար մատչելի դարձնելու նպատակով պետք է համախմբել բոլոր ուսուցիչների ջանքերը,ուսումնասիրել լավագույն ուսուցիչների փորձը, ընդօրինակել ուսանելին,առաջավորը:Դասապրոցեսում օգտագործել դպրոցի դիտակտիկ պարագաները:Այժմ ուսուցիչները հնարավորություն ունեն դասի ընթացքում օգտագործել ինտերնետային նյութերը՝ բազմաբնույթ տեղեկություն հայթայթելու նպատակով:

Մանկավարժների կարևորագույն խնդիրներից մեկը համարել ժամանակակից մեթոդներով դասապրոցեսի կազմակերպումը և դասին յուրաքանչյուր աշակերտին իր հնարավորությունների չափով մասնակից դարձնելը՝ ապահովելով սովորողների՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված առարկայական չափորոշիչներով նախատեսված նվազագույն մակարդակի յուրացումը:

Մեծ ուշադրություն դարձնել աշակերտների վարքին, զարգացնել գրագետ ու կապակցված խոսքը բոլոր առարկաների դասավանդման ընթացքում , հաղորդակից դարձնել գիտամշակութային նորագույն նվաճումներին:

Հասնել աշակերտի համալիր դաստիարակության ապահովմանը,նրա հայրենասիրության և ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մանակցության անհրաժեշտության գիտակցմանը:

Դպրոցի սովորողներին նախապատրաստել դպրոցականների առարկայական օլիմպիադաների բոլոր փուլերին՝ նրանց ստեղծագործական մտածողության, հմտությունների ու կարողությունների զարգացման միջոցով:

ՌԻսուցչի աշխատանքը գնահատելիս հաշվի առնել կրթության որակի արդյունավետության բարձրացման ուղղությամբ նրա կողմից կատարած աշխատանքները և տվյալ դասարանի աշակերտների ընդհանուր կարողություններին համապատասխան հնարավոր արդյունքերը: Լուրջ ուշադրություն դարձնել 1-ին դասարանի աշակերտների ուսումնական գործընթացը կազմակերպելու հարցերին,պայմաններ ստեղծել նրանց ուսուցման ,դաստիարակության և ժամանցի նորմալ կազմակերպման համար:

## I ԲԱԺԻՆ
## ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

| | Աշխատանքի բովանդակությունը | Ժամկետը | Կատարող, պատասխանատուն | Նշումներ |
|---|---|---|---|---|
| 1 | 2023-2024 ուստարվա աշխատանքների պլանավորում և կազմակերպում | 2023թ. օգոստոս | Տնօրեն | |
| 2 | Եղնիկ գյուղում անցկացնել աշակերտների հաշվառում և պարտուսից դուրս մնացած երեխաներին ընդգրկել դպրոց: | 2023թ. օգոստոս | Տնօրեն | |
| 3 | Առաջին դասարանի աշակերտների ընդունելությունը կատարել ծննդյան փաստաթղթերի, օրինական ներկայացուցչի , ՀՀ ԿԳ նախարարի 24.11.2010թ N 1640-Ն որոշման հիման վրա և թույլ չտալ սահմանված կարգի խախտում: | 2023թ. Օգոստոս | Տնօրեն | |
| 4 | Անցկացնել սեմինար: <<Հանրակրթության մասին>>օրենքի փոփոխությունների և ՀՊՉ –ի ներդրման վերաբերյալ: Հանրակրթական պետական չափորոշչի ներդրմամբ պայմանավորված՝ 5-րդ և 7-րդ դասարանների ուսումնական պլանի կազմում | 28-29.օգոստոսի 2023թ | Տնօրեն<br>Մ/մ նախագահներ | |
| 5 | Հաստատել ուսպլանը (մանկխորհրդի որոշման հիման վրա ):<br><br>Կազմե՛լ և կառավարման խորհրդի քննարկմանը ներկայացնել<br>. տարիֆիկացիոն ցուցակը<br>. հաստիքացուցակը<br>. նախահաշիվը | Մինչև 31-ը օգոստոսի<br><br>Մինչև 31-ը օգոստոսի | Տնօրեն<br><br>Տնօրեն,<br>Հաշվապահ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 6 | Հաստատել ուստարվա համար<br>.Մանկխորհրդի կազմը<br>.Հերթապահության կարգը<br>.I կիսամյակի դասացուցակը<br>.Դպրոցում սահմանել 5-օրյա աշխատանքային ռեժիմ<br>.Մեթոդմիավորման նախագահների տարեկան աշխատանքային պլանները<br>.Դասղեկների տարեկան աշխատանքային պլանը<br>.Գրադարանավարի տարեկան աշխատանքային պլանը:<br>.Ուսուցչի օգնականի տարեկան աշխատանքային պլանը<br>.Ջինղեկի տարեկան աշխատանքային պլանը | Մինչև 31.08.2023թ<br><br>Մինչև 10.09.2023թ<br><br>Մինչև 10.09.2023թ | Տնօրեն | |
| 7 | Իրականացնել վերահսկողություն<br>. Պլանավորված աշխատանքների կատարման<br>.Հաճախումների, դրանց հաշվառման<br>.Մատենավարության աշխատանքների: | Ամիսը մեկ անգամ | Տնօրեն<br>Մ/Մ նախագահներ | |
| 8 | Մանկավարժական խորհրդի հերթական և արտահերթ նիստերի կազմակերպում և անցկացում: | Ուստարվա ընթացքում | Տնօրեն | |
| 9 | Ուսումնական նոր ծրագրերի, դասագրքերի ու մեթոդական ձեռնարկների ուսումնասիրում և քննարկում | Ուստարվա ընթացքում | Տնօրեն,<br>Մ/Մ<br>ուսուցիչներ | |
| 10 | Կազմել հաշվետվություններ<br>. նախորդ ուստարվա<br>.ուսումնադաստիարակչական և ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ<br>. ներկայացնել կառավարման խորհրդին | Ուստարվա ընթացքում | Տնօրեն,<br>հաշվապահ | |
| 11 | Առարկայական թեմատիկ պլանների քննարկում , հաստատում : | Օգոստոս, սեպտեմբեր | Տնօրեն , Մ/Մ, ուսուցիչներ | |
| 12 | Կատարել ներքին գնահատում<br>. նախորդ ուստարվա ուսումնադաստիարակչական և ֆինանսատնտեսական գործունեության հաշվետվությունների հիման վրա | Հունիս 2024թ | Տնօրեն | |
| 13 | Կատարել լիազոր մարմնի կողմից օրենքով նախատեսված կարգով արվող հրահանգները | Ուստարվա ընթացքում | Տնօրեն,<br>հաշվապահ, այլք՝ ըստ ոլորտների | |
| 14 | Ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանի քննարկում և հաստատում | Օգոստոս | Մանկխորհուրդ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 15 | Մինչև նոր ուսումնական տարվա սկիզբը ավարտել դասագրքերի բաշխումը պակասը լրացնել նոր դասագրքերով: | Օգոստոս, սեպտեմբեր | Տնօրեն, գրադարանավար | |
| 16 | ՈՒսումնական ծրագրերի կատարման ստուգում | ՈՒս տարվա ընթացքում | Տնօրեն Մ/Մ | |
| 17 | Դպրոցական օլիմպիադաների կազմակերպում | Առաջին կիսամյակի ընթացքում | Տնօրեն, Մ/Մ ուսուցիչներ | |
| 18 | Մրցութային միջոցառումների կազմակերպում | ՈՒսումնակն տարվա ընթացքում | Ուսուցիչներ | |

## ԲԱԺԻՆ II

## ԱՇԽԱՏԱՆՔ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿԱԴՐԵՐԻ ՀԵՏ, ՆՐԱՆՑ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1 | Ծանոթացնել ուսուցիչներին որակավորման տարակարգի բնութագրիչներին և դրանց շնորհման չափանիշներին՝ մղելով նրանց տարակարգ ստանալուն, և կամավոր ատեստավորմանը մասնակցելուն | Ուսումնական տարվա ընթացքում | Տնօրեն Մ/Մ | |
| 2 | Մանկավարժական առաջավոր փորձի ուսումնասիրում, ընդհանրացում և ներդրում պրակտիկ աշխատանքում | Ուսումնական տարվա ընթացքում | Տնօրեն , Մ/Մ, ուսուցիչներ | |
| 3 | Ուսուցիչներին հաղորդակից դարձնել մանկավարժական նորագույն նվաճումներին, կազմակերպել սեմինարներ, ընթերցումներ, կազմակերպել փոխադարձ դասալսումներ | Ուսումնական տարվա ընթացքում | Տնօրեն | |
| 4 | Կազմակերպել մասնագիտական և մանկավարժական - մեթոդական խորհրդատվություններ | Ուսումնական տարվա ընթացքում | Տնօրեն և Մ/Մ ուսուցիչներ | |
| 5 | Մանկավարժական առաջավոր փորձի ուսումնասիրման, ընդհանրացման և ներդրման նպատակով փոխադարձ դասալսումներ կազմակերպել | Ուսումնական տարվա ընթացքում | Տնօրեն և ուսուցիչներ | |
| 6 | Ուսուցիչներին նախապատրաստել հերթական պարտադիր ատեստավորմանը | Ապրիլ,մայիս ամիսներին | Տնօրեն | |
| 7 | Դասավանդման մեթոդների կատարելագործման , համագործակցային ուսուցման և նոր տեխնոլոգիաների կիրառման նպատակով կազմակերպել բաց դասեր | Ուսումնական տարվա ընթացքում | Տնօրեն Մ/Մ ուսուցիչներ | |
| 8 | www.armedu , www.aniedu ԿԶՆԱԿ կայքերից մասնագիտական ամսագրերի, թերթերի նյութերի և նորությունների ուսումնասիրում և քննարկում | Ուսումնական տարվա ընթացքում | Տնօրեն Մ/Մ ուսուցիչներ | |

ԲԱԺԻՆ III
ՆԵՐԴՊՐՈՑԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1 | Սկսնակ ուսուցիչներին օգնել մշակել առարկայական ծրագրեր և օգնել դասավանդումը ճիշտ կազմակերպելուն, ինչպես նաև մասնակից դարձնել ԿԶՆԱԿ- ի կողմից կազմակերպվող վերապատրաստումներին | Ուսումնական տարվա ընթացքում | Տնօրեն , Մ/Մ, փորձառու ուսուցիչներ | |
| 2 | Հրամանագրել դասղեկ և դասվար ուսուցիչներին, պահանջել նրանցից մինչև սեպտեմբերի 10-ը կազմել ուսումնադաստիարակչական աշխատանքների պլաններ և ներկայացնել հաստատման | Օգոստոս | Տնօրեն | |
| 3 | Աշխատանքային պլաններում մեծ տեղ հատկացնել առաջավոր փորձի փոխանակմանը | սեպտեմբեր | Ուսուցիչներ | |
| 4 | Մանկխորհրդի միջոցով դնել առանձին առարկաների դրվածքի ուսումնասիրումը և արդյունքներն ամփոփել | ՈՒսումնական տարվա ընթացքում | Մանկխորհի նախագահ | |
| 5 | Հրամանագրել առաջին դասարանի աշակերտներին և կատարել բոլոր գրառումները աշակերտների շարժի մատյանում: | 28.08.2023թ | Տնօրեն | |
| 6 | Մեծ հոգածությամբ նախապատրաստել և անցկացնել ազգային տոներն ու արժանահիշատակ տարելիցները | ՈՒսումնական տարվա ընթացքում | ՈՒսուցիչներ | |
| 7 | Կատարել հասարակական աշխատանքների բաժանում կոլեկտիվի անդամների միջև | Սեպտեմբեր ամսվա ընրացքում | Տնօրեն | |
| 8 | Հրավիրել դպրոցում գործող խորհուրդների նիստեր՝ քննության առնել դպրոցին վերաբերող հարցեր | ՈՒսումնական տարվա ընթացքում | Տնօրեն | |
| 9 | ՈՒսումնադաստիարակչական աշխատանքները օրինակելի ձևով կատարողների նկատմամբ կիրառել խրախուսանքի միջոցներ, իսկ թերացողների նկատմամբ՝ պատժի միջոցներ | ՈՒսումնական տարվա ընթացքում | Տնօրեն | |

## ԲԱԺԻՆ IV
## ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1 | Ուսուցիչների ինքնկրթության գործը հաջող կազմակերպելու նպատակով օգնել նրանց ինքնակրթության պլաններ մշակելիս և համաձայն պլանների` ուսումնասիրել արդի մեթոդական գրականությունը և հայտնի մանկավարժների փորձը մշակել և կիրառել ուսման պրոցեսում, կամ հիմնվելով դրա վրա ստեղծել մեր դպրոցին սեփական արդյունավետ մեթոդներ | Ուսումնական տարվա ընթացքում | Տնօրեն, ուսուցիչներ | |
| 2 | Ինքնակրթության պլաններում տեղ հատկացնել առարկայական գիտելիքների հարստացման , գեղագիտական, էկոլոգիական, բարոյական, ֆիզիկական դաստիարակության հարցերին | Սեպտեմբեր | Ուսուցիչներ | |
| 3 | Տարվա ընթացքում կազմակերպել մեթոդական, առարկայական բնույթի զեկուցումներ, կազմակերպել բաց դասեր | Ուսումնական տարվա ընթացքում | Մ/Մ Ուսուցիչներ | |
| 4 | Մանկխորհի նիստերում հաճախակի քննության առնել դպրոցի ուսումնադաստիարակչական հարցեր, մշակել միջոցառումներ` ուսման որակի բարձրացման համար | Ուսումնական տարվա ընթացքում | Տնօրեն, ուսուցիչներ | |
| 5 | Ճիշտ պլանավորել գրադարանի աշխատանքերը, աշակերտներին և ուսուցիչներին մասնակից դարձնել գեղարվեստական գրականության ուսումնասիրմանը և հաճախակի կազմակերպել կարդացած գրքերի քննարկումներ | Ուսումնական տարվա ընթացքում | Գրադարանավար, ուսուցիչներ | |
| 6 | Աշակերտների մեջ գրականության նկատմամբ սեր առաջացնելու նպատակով խրախուսել այն աշակերտներին , ովքեր տարվա ընթացքում շատ գրքեր են կարդացել | Ուսումնական տարվա ընթացքում | Տնօրեն Ուսուցիչներ | |
| 7 | Աշակերտներին բացատրել գրքի դերի, նշանակության և այն խնամքով պահելու կարևորության մասին | Ուսումնական տարվա ընթացքում | Գրադարանավար, ուսուցիչներ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 8 | Աշակերտների կողմից ծրագրային նյութի յուրացման աստիճանը պարզելու նպատակով տալ գրավոր աշխատանքներ և արդյունքները քննարկել մանկխորհրդի նիստում | Կիսամյակների ընթացքում | Տնօրեն, դասղեկներ | |
| 9 | Տարվա ընթացքում հետևողականորեն վերահսկել դասղեկների աշխատանքները , մ/մ նախագահների աշխատանքները, կատարել լսումներ և նրանցից լավագույնի օրինակը տարածել դպրոցում | Տարվա ընթացքում | Տնօրեն Մ/Մ | |
| 10 | Դպրոցում ստեղծել մանկավարժական անկյուն, ուր կտեղադրվեն մանկավարժական և մեթոդական թարմ գրականություն և ամսագրեր | Տարվա ընթացքում | Տնօրեն | |
| 11 | Պահանջել դասավանդող ուսուցիչներից լրջորեն նախապատրաստվել հաջորդ օրվա դասերին, դասրան մտնելուց առաջ ունենան դասի պլանը, դասապրոցեսում օգտագործել թեմային վերաբերվող տեխնիկական միջոցներ, դիդակտիկ նյութեր, ստեղծեն միջառարկայական կապեր, օգտվեն օժանդակ նյութերից | Ուսումնական տարվա ընթացքում | Տնօրեն | |
| 12 | Գրավոր աշխատանքների վիճակը պարզելու նպատակով տարվա ընթացքում տալ գրավոր աշխատանքներ հ. լեզվից, ռ. լեզվից, մաթեմատիկայից և այլն | Կիսամյակների ավարտին | Տնօրեն Մ/Մ | |
| 13 | ՈՒսումնական առաջադիմությունը բարձրացնելու նպատակով տալ գրավոր աշխատանքներ նաև մյուս առարկաներից և արդյունքները ամփոփել մանկխորհի նիստում: Նաև հանձնարարել ուսուցիչներին մրցակցային վարժությունների , խաղերի միջոցով նույնպես խթանել դասի յուրացման արդյունավետության | Տարվա ընթացքում | Տնօրեն, ուսուցիչներ | |
| 14 | 2023-2024 ուստարվա ընթացքում ստուգման ենթարկել դասավանդման վիճակը առանձին առարկաների գծով և արդյունքները ամփոփել | Տարվա ընթացքում | Տնօրեն, Մ/Մ դասղեկներ | |
| 15 | Պահանջել սկսնակ ուսուցիչներից լավ ուսումնասիրել գնահատման նոր համակարգը | Սեպտեմբեր | Մ/Մ Ուսուցիչներ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 16 | Սկսնակ ուսուցիչներին օգնել նպատակային կերպով կիրառել փորձված ուսուցիչների մեթոդներն ու փորձերը: | ՈՒսումնական տարվա ընթացքում | Մ/Մ Ուսուցիչներ | |
| 17 | Տարածել հետ մնացող աշակերտների հետ տարվող լավագույն աշխատանքների փորձը: | ՈՒսումնական տարվա ընթացքում | Մ/Մ Ուսուցիչներ | |
| 18 | Առավել ուշադրություն դարձնել քննական առարկաների որակի բարձրացմանը | 2-րդ կիսամյակում | Մ/Մ Ուսուցիչներ | |
| 19 | Հսկողություն սահմանել matyan.emis.am կայքի ամենօրյա գրանցման համար | Ուսումնական տարվա ընթացքում | Տնօրեն | |

## ԲԱԺԻՆ V

## ԱՇԽԱՏԱՆՔ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1 | Հանրակրթական դպրոցի տնօրենի կամ մանկավարժական խորհրդի քննարկմանը ներկայացնեն սովորողի ուսումնադաստիարակչական աշխատանքի բարելավման , մանկավարժների խրախուսման , իրենց պարտականություններում թերացող մանկավարժներին պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ առաջարկություններ | Ուսումնական տարվա ընթացքում | Ծնողական խորհրդի նախագահ | |
| 2 | Աջակցել հանրակրթական դպրոցի դժվար դաստիարակվող սովորողների դաստիարակությանը, ուսման որակի բարելավմանը և սոցիալական աջակցության կազմակերպմանը | Ուսումնական տարվա ընթացքում | Ծնողներ | |
| 3 | Ապահովել երեխայի իրավունքների պաշտպանությունը դպրոցում | Ուսումնական տարվա ընթացքում | Ծնողական խորհուրդ | |
| 4 | Մասնակցել կազմակերպվող սեմինարներին, խորհրդատվություններին | Ուսումնական տարվա ընթացքում | Ծնողներ | |
| 5 | Պարբերաբար ծանոթացնել իրենց իրավունքներին, պարտականություններին , ՀՀ օրենսդրությամբ սահմանված պատասխանատվության մասին | Ուսումնական տարվա ընթացքում | Ծնողական խորհուրդ | |
| 6 | Մասնակցել ծնողազուրկ և սոցիալապես անապահով երեխաների նյութական օգնություն ցույց տալու գործին | Ուսումնական տարվա ընթացքում | Ծնողներ | |
| 7 | Մշակել և ձևավորել միասնական պահանջներ քննարկել մանկխորհրդի նիստերին | Ուսումնական տարվա ընթացքում | Ծնողական խորհուրդ | |
| 8 | Աջակցել արձակուրդների ժամանակ սովորողների հանգստի և ժամանցի կազմակերպմանը | Ուսումնական տարվա ընթացքում | Ծնողական խորհուրդ | |
| 9 | Աջակցել և մասնակցել նպատակային էքսկուրսիաների կազմակերպմանը: | Ուսումնական տարվա ընթացքում | Ծնողներ | |
| 10 | Ակտիվորեն օգտվել emis.am կայքից: | Ուսումնական տարվա ընթացքում | Ծնողներ | |

## ԲԱԺԻՆ VI

## ՈՒՍՈՒՄՆԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1 | Կազմել ամենամյա ծախսերի նախահաշիվը, հաստիքացուցակը, տարիֆիկացիան, ներկայացնել դպրոցի կառավարման խորհրդի քննարկմանը, հավանության արժանանալուց հետո ներկայացնել տարածքային կառավարման մարմնի հաստատմանը | Սեպտեմբեր, հունվար | Տնօրեն, հաշվապահ | |
| 2 | Տարածքային կառավարման մարմին ներկայացնել հաջորդ տարվա բյուջետային ֆինանսավորման հայտը | Մինչև դեկտեմբեր | Տնօրեն | |
| 3 | Կազմել եռամսյակայի ֆինանսական հշվետվություններ և տնօրենի հաստատմամբ ներկայացնել տարածքային կառավարման մարմին | Ուսումնական տարվա ընթացքում | Հաշվապահ | |
| 4 | Ամրապնդել և հնարավորության սահմաններում ավելացնել դպրոցի նյութատեխնիկկական բազան մարզադահլիճի գույք: | Ուսումնական տարվա ընթացքում | Տնօրեն | |

## ԲԱԺԻՆ VII

## ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

| | |
|---|---|
| 1.Միջոցառում նվիրված ՀՀ անկախության օրվան | 20.09.2023թ. |
| 2. Միջոցառում նվիրված ուսուցչի օրվան | 05.10.2023թ. |
| 3. << Ամանորյա հանդես>> | Դեկտեմբեր |
| 4. <<Հայոց բանակ մեր հաղթական>>- 32 ամյակ | 26.01.2024թ. |
| 5. Գիրք նվիրելու օր | 19.02.2024թ. |
| 6. Միջոցառում նվիրված <<Մարտի 8>>-ին | 07.03.2024թ. |
| 7. Ոգեկոչման և հիշատակի ցերեկույթ | 23.04.2024թ. |
| 8. <<Մայիս հաղթանակների ամիս>> | Մայիս |
| | |